մէն կրսկսի տեղական հրապարակին վրայ մանր առեւտուրի և միւս կողմէն ղրկելու ի Կեսարիա ամէն կարգի վաճառք՝ շահակցութեամբ իր բազմաթիւ եղբարց, որոց մեծն ու հայրապատիւն էր Հաճի Մանուկ։

Ժամանակին՝ մանաւանդ օտարազգի՝ գլխաւոր վաճառականներն էին ի Կ. Պոլիս Թ. Բալի, Բէդէր Վիչինոյ, Ստէֆանովիչ, Բասդէլլի, Շիքեարի, Զիչինիա, Տէքոզի, Սքուլիտի, Տավիտ Կլավանի ու Անտրէա Հէր աբստրիացին, որ Վիեննայի և Զուիցերիայի վաճառքներու վրայ կընէին մեծ գործեր. իսկ մեծ սեղանաւորներ էին Տուպինի, Բոլանտոյ, Բորոնիոյ, Պալթաճը, Ալիոն, Զարիֆի և այլք։ Մանուկեան մանո՛ւկ վաճառականն ալ այս մեծ վաճառականներէն կառնէր իր վաճառքն ու պէտքը, և Կեսարացւոց յատուկ խիստ յառաջամտութեամբ քիչ ժամանակէն զարգանալով՝ փոխադրուեցաւ հինաւուրց Բէպէճի խանը (¹), և հոն սկսաւ գնել պալեայով մեծաքանակ ու ծախել մեծաքանակ՝ ընդհանրապէս տիմիքաթօն, չէյթան պէզի, պոյալըներ ու վերջերը նաև պասմայ, որ կը վաճառուէր մեծագոյն մասամբ 38 ինչէզի վրայ՝ եարտան 70 փարայէն մինչև 3½-4 ղրշ.ի։

Այսպէս տասներեք տարի շարունակելով՝ 29-30 տարեկան հասակին արդէն եղած էր Կ. Պոլիսի առաջին օտանին. Հաճի Մանուկ՝ նահապետական շատ պարզմիտ դրութեամբ կը նշանէ հեռուէն՝ Կեսարիայէն՝ իր կրտսեր այս եղբայրն Արզեան Մանուկի քրոջն հետ, նոյնպէս նը-շանաւոր ընտանիքէ։ Սենեքերիմ Մանուկեան մեծ պատրաստութեամբ և պատուասիրութեամբ Զմիւռնա, Պէրութ, Մէրսին հանդիպելով՝ կը ժամանէ Կեսարիա, և

(¹) Կաւանդուի որ այս մեծ իջեւանը մնացած է Կոսս սնդիանոսի ժամանակէն. ի սկզբան կը ծառայէր հիւանդանոցի տեղ։